թոլիկեն և 13, 758 հոգի բողոքական, այն ինչ մի սերունդ առաջ բողոքականների ընդհանուր թիւն այս քաղաքում հազիւ 4000-ի էր հասնում,

—Զարգացման զարմանալի ընդունակութիւն է ցոյց տալիս սաքսոնական փոքրիկ թագաւորութիւնը բողոքականութեան մայր պետութիւնը, Այդ ժողովուրդը օրինակելի է ոչ միայն բարեգործական և հասարակաց հաստատութիւններով, այլ միսիոներական ընկերութիւններով. Դոցանից մէկն է Աւետարանական—լութերական—սաքսոնական միսիոներական գլխաւոր ընկերութիւնը, որ գոյութիւն ունի 81 տարուց ի վեր, Ընկերութեան քարտուղարի հրատարակած վերջին տարուայ հաշիւներից երեւում է, որ ընկերութիւնը 1899 թ. օգոստ. 1-ից մինչև 1900 թ. յուլիսի 31-ը 160,900 մարկ եկամուտ է ունեցել, որից 7000 մ. յատկացրած էր հրէից մէջ քրիստոնէութիւն տարածելու նպատակին, Վերոյիշեալ գումարից ընկերութիւնը 28000 մ. ուղարկել է արեւելեան Աֆրիկայի (Ostafrika) և Հնդկաստանի սովեալներին բաշխելու, Ծննդեան տօներից յետոյ եկեղեցում կատարուած ժողովարարութեան գումարը 33000 մարկ է եղել. այս ժողովարարութիւնը, որ կատարւում է տարին անգամ արտամիսիոնի համար սկսուած է 30 տարի առաջ հետզհետէ աւելի և աւելի աճում է հաւաքուած գումարը. առաջին տարին հաւաքուել է 7000 մարկ, անցեալ տարի 29000 մարկ, Ահա ինչ է նշանակում գիտակցական վերաբերմունք դէպի գործը։ Վերոյիշեալ 160,900 մարկի հետ հաշուելով և մի քանի ուրիշ եկամուտներ, անցեալ տարուայ ընթացքում սաքսոնական պետութիւնը հեթանոսների մէջ քրիստոնէութիւն տարածելու նպատակի համար 206,699 մարկ զոհաբերութիւն է արել։ Զուտ դրամից զատ՝ ընկերութիւնը 77,630 մ. հեթանոսական և 13,322 մ. հրէական միսիոնի անունով կարողութիւն ունի,

---

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

### ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՒԱՆԻՑ

ԲԱՐՁՐ ԳԵՐԱԶԱՆՑ ՊԱՅԾԱՌԱՇՈՒՔ ՆԵՐՍԷՍ ՎԵՀԻՄԱՍՏ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ,

**ՈՂՈՐՄԱԾ և ԲԱՐԵՐԱՐ ՏԷՐ ԻՄ,**

Ողջոյն Սրբութեան Համբուրիւ Քրիստոսի,

Շնորհապարտ խոնարհութեամբ՝ տարածմամբ բազկացս միշտ ի վեր ի յերկինս առ ամենաբարձրեալն Աստուած՝ վերառաքեմ զաղօթս և զխնդրուածս իմ առ նա անդադար գոհաբանութեամբ զամենօրհնեալ կամաց իւր սրբոց, որ գիտէ լցուցանել զիւրաքանչիւր անձին սրտի զփափագ՝ ի ձեռն պէսպէս խնամոց սուրբ Աստուածութեան իւրոյ. զոր օրինակ զայն ուրախութիւն ի վաղուց իսկ հետէ՝ որ իմս էր, լցոյց ահա յիրաւի անպատմելի խնդութեամբ. քանզի յորժամ լուայ զբարեկագնալդ առ սրբազնակատար Տէրս մեր, արդարև ահա արեւու խոյն ի սիրտ իմ ծագեաց և բոցամաճանչ ճառագայթք նորա, պայծառապէս զինև շողշողեցան. և կանխաւ ծաւրաւեալ հոգի իմ, իբրև յերկնային ցօղոյ լիապէս զովացաւ, և բոլոր բովանդակ ժամանակաց կամօքն յօժարութեամբ խորհրդեան հոգւոյս, ահա կենդանւոյն զիս յերանելեաց վիճակի՝ խաղապէս համարեցայ. վասնորոյ որպէս անձամբ անձին առաջի իսկ եկեալ զհետ հարց և եղբարց, շնորհաւորեմ այսու զուրախաբար գալուստ ձեր առ մեզ. և զզուարճալի հանդիսաւոր տեսութիւն փառաւորական մեծամեծ փափագանաց անէչանաք սրտի ձերոյ զհետ ամենայցանկալի՝ ես և հոգւով փարելի ծերունազարդ Սրբազնասուրբ Տեառն մերոյ արժանաւոր գովասանութեամբ փառաւորեմ և մեծացուցանեմ, և զմայրական սիրոյն զօրութեամբ՝ փառահանամ և համարձակիմ քանի մի խնդիր առաջի առնել ի սմա։

Յառաջագոյն գրեալ ծանուցեալ եմ զհարկաւորսն, բայց որոց ամենից գոնեայ համառօտիւս իմն պատասխանի տուեալոյ ի ձէնջ ամենայնութիւնքն իմ առկայծն սպասեալ մնամ. այլ չգիտելով զպատճառն՝ վերակրկնել յայնց յայնցիկ զինչ ինչ աստանօր՝ ո՛չ անդէպ համարիմ։

Սրբազնագունեղ Տէրս մեր մինչ էրն աստ ինքն միայն գիտէր զտան իւր ամենայն կառավարութիւն. և մինչ հանդերձեալ եղև ի գնալ աստի, յանձն արար զայն խնամաթեամբ կամաց իւրոց, ում և ինքն կամեցաւ, որպէս զի ի բարեւոր վերադառնալն աստ պարտաւորս կացուցէ ընդ այլս՝ առաւել գիտելով թէ, մինչ առ ձեզ էք՝ դուք ամենեքին միշտ ազգի ազգի եղանակօք ինձ մեղադիր լինէիք, թէ իբրև լերին Մասեաց, հանդիսաւոր երեւցոյց զպարտս իւր. ո՞ւր է ապա

ձեր ամենայն լաւագէս կատարելութիւն, զի ես ի գնալն իմ՝ զպարտասիրութիւնն իմ բոլորովիմբ զՀետ իմ տարայ, և ոչ թողի ձեզ բնաւ ինչ մասն ինչ յայնմանէ. զի՞նչ են արդ աՀա այսքան նորոգ ծանրագոյն պարտուց բազմութիւնք, որք զերագանցեն քան զլեառն Մասեաց. զիա՞րդ ոչ բաւականասցայք եղերովքն ի տան. ո՞չ ապաքէն Հարկ էր ձեզ առել միմեանց թէ՝ որովՀետև այսօր սրբազան Տէրս մեր ի պատճառս պարտուց սրբոյ Աթոռոյս գնացեալ շրջի ի դրունս ազգին իւրոյ, վասնորոյ պարտիմք մեք զամենայն աւուրս կենաց մերոց՝ պաՀօք և ծոմօք անդուլցանել, մինչև բարեաւ եկեսցէ. ուրեմն մեծ ամօթ երեսաց ձերոց, և այլ բազում սոյնպիսիս։

Արդ՝ յետ վախճանի երկուց ամսեաց՝ Սարսար բարեկարգն մեր տառապեալ էր առ զչափ խանն, ի վերաՀասութիւն գործել, և ըստ բարձու Հրամանի Նորին զամն ի մէնջ կառավարիչ կարգել ի տեղի Հանգուցեալ Գրիգոր Հօր. և այսու մաօք զՀետ մերայնոց ամենից խորՀուրդ արարեալ՝ մարդ էր խնդրեալ. մերայինք ես զիս էին յիշատակեալ. առ այս կոչեալ զիս առ ինքն՝ ի ներկայութեան նոցա յանձն արար ինձ զայն պաշտօն կառավարութեան սրբոյ Աթոռոյս, որում խաղաղ ի բաց առացի, իսկ յետ քանի աւուրց ինքն բարեյիշեալ Սարսարն եկն առս, և զմխիթարանութիւնս մեր ամենայն առ ինքն կոչեաց. և զկնի բազում մխիթարութեանց և յուսադրութեանց Հարցեալ առ նոսա, թէ զո՞վ ոք կամիք ի ձէնջ կառավարիչ լինել ձեզ. սոքա զանուն նորա, զոր կարգեցից ի վերայ ձեր կառավարիչ, փոխանակ չրախճիլին, մինչև խալիֆայն անտի ինքն յառաջացուսցէ. որք առ Հասարակ միաբերան ձայնեցին թէ՝ Եփրեմ մարՀասյն կամիմք. ասաց յոյժ բարւոք, և ինձ յանձն արար, որում ես մինչ անգամ ի բաց առացի, սկսաւ բարկանալ և ասել. թէ բաց ի քէն ո՞վ այլոփ լինի, ո՞ւր մնայ թէ աՀա ամենեքեան զքեզ կամին, վասնորոյ պարտիս դու լինել, ո՞չ ապաքէն ի վաղուն կամ ի միւս աւուրն խալիֆայն ես զքեզ է կարգելոց ասաց՝ կնքեաց և գնաց։

Զոր ի լսելն ի գրութեանց սրբոյ Աթոռոյս՝ սրբազնակատար Տէրս մեր գրեալ և կարգեալ էր զիս խրրու նոր սինօթական, որ ի վաղ ժամանակաց Հեռանէ, այն է, յաւուր արեգայութեան իմոյ, որպէս զձեռնանէ իմմէ, կայեալ ձեր, ածիք մածիք զիս ի նոյն Համգէս սինօթի. և ըստ ծխոփ կանոնի նորա, զգեցեալ զինե ըստ խմբախոս զՀոգաբարձութիւն խորՀրդեան, զպաՀպանիչն առ յինքենէն ընկալայ. սակայն ես շնորՀակալ եմ զարձեալ զմեծութենէն նորա, Տէր Աստուած ըղկեանս խաղաղականս պարգևեսցէ, ես յինքիցիմ միշտ նոր սինօթական. և ըստ վերոյ ի բարեաւ գայն յամօթանաց մեծ մասն՝ թո՛ղ ինձ Հանցէ բաժին՝ ի պատճառանս նորոգ աբարեալ պարտուց իմոց, են։

Ի սկիզբն ներկայ տարւոյս՝ ի 8 յունվարի սինօթականք տեղւոյս՝ զՀետ իւրեանց և այլք քանի մի պատշաճաւոր եղբարց ի միաբանութեանց մերոց՝ խորՀուրդ արարեալ կոչեալ էին զիս առ ինքեանս, և ստիպմամբ բազմաւ յանձն արարին ինձ զամենայն զերումից կառավարութեան զԹէֆտէրն սրբոյ Աթոռոյս մերոյ, և տայցին թէ՝ որպէս յերեկն և յեռանդն աղաղակէիր զպարտութիւն խոստովանելով, թէ մեր ամենայն կառավարութիւն պարտի մի ըստ միոջէ գրութեամբ լինել, և ահա յամօթ Հաշիւս առնել յամենայն գործակալաց, և մինչև զչնչին իր իմն մնից և ելից տալ առնելն գիտութեամբ և Համակամութեամբ բազմաց պարտի լինել, և ո՛չ ըստ առածին թէ՝ այսյն եկեր ի խաղ գընաց, Հօլիւն եկեր առ ոչխարն գնաց, այսպ թէ ո՛չ՝ սուրբ Աթոռս մեր այսու եղանակագնալով գնալով ընդ այնպիսի պարտուք անկանի, զոր ո՛չ ոք կարէ ազատել յաւիտեանս յաւիտենից. այլ, աՀա ժամանակ ընդունելի, աՀա օր փրկութեան ըստ գրոյն. ուրեմն պարտիս ամենայն աչալրջութեամբ Հետևարար կառավարել. մեք ես պարտիմք յամէ ամիս զՀաշիւ քո օրինաւոր կերպիւ տեսանել, և ի Հաւանելն մեր՝ ձեռագրել զայն Թէֆտէրն, զոր աՀա յորէ անտի անխափան առնեմք այնպէս, որպէս ունիք զխաղ ի գրութենէ, իւրեանց առ տէրութիւն ձեր, են։ Օրինաք պարտաւորութիւն է գործունէի ամենայն զօրութեամբ արի՛ արթուն և զգաստ լինել՝ ես և Հաւատարիմ առ ինքեան յանձնեցեալ գործ

խուր՝ առ ի արգիւնաւորել զնոյն․ ի մտի ունելով միշտ զայն պատուէր տէրունի, թէ և ես ծառայ անպիտան եմ, զոր ինչ պարտն էր, զայն առնեմ, եմ։

Յորժամ բարեգթութեամբ Տեառն Աստուծոյ ամենակալին ողջ իցեմք, ի լրման ամսուոյն մտադրեալ ունիմ գլխել թէֆտէրն առ Տէրդ իմ մատուցանել․ առ որ աներկբայ եմ բառ ամենայնի, թէ՝ և դուք ունիջիք զհաւանութիւն, և զթերութեան եղանակ ի զատանելն՝ մեզ ուսուցանել, զոր բազմիցս խնդրեալ եմք կարի և յոյժ աղերսանօք, զի որ կարօտիմս, պարտիմ ես միշտ խնդրել, որով բղխեսցեն առ իս ի քաղցրացեալ սրտէ ձերմէ խրատական ազդու բանք օգտակարայն իմոց երկուց կենաց։ Վասն զի փառք Աստուծոյ, զի և ես զի ի շարս բընաւորաց ծանուցեալ դուն գործեմ հանապազ աշխատասիրել յոր գործ և գիտիցէ սրբոյ Աթոռոյս, յորում յամենայն զօրութենէ և ի կարողութենէ իմմէ հետեւիլս բազում ջանասիրութեամբ մեծութեան ձեր իսկ յայտնի է, զոր ի լինելն ձեր աստ քաջ գիտէք․ այսպէս ողորմած Տէր՝ աշխատիմ աշխատիմ, յետոյ ի ժամ վարձատրութեան՝ յանկարծակի նոր նոր անձինք ուստի և իցէ ի յայս եկեալ՝ արկանեն զիս առ անկիւն իմիք, և զամենայն աշխատութիւնս իմ անհետ առնեն․ զհետ որոց եթէ իրաւամբ զաստատանին խօսել ունիցիմ, առանց խղճի մտաց առ ի ծուռնս իմս յարուցանեն․ թէև Տէր ոչ առնէ անտես, բայց մարդկան ես ամենակերպ վնասակար բնութեան առնիլ միշտ, ընկերութիւն գործոյն է հանապազ, որպէս և ահա իսկ Մասեաց նման տեսանի։ Ուստի բազում անգամ մեծամեծ թախանձանօք գրեալ խնդրեցի յողորմած Տեառնէդ իմմէ, թէ վասն սիրոյդ Աստուծոյ՝ գտէք զկէս հնարից իմոց, իբրու կամ՝ յայնպիսի գործոյ մի կացուսջիք զիս աստ, զի և ես ծանուցեալ զգործն իմ, և մի զհետ այլ ընդ այլոց ընկերաց փոփոխեսցին․ և կամ ուր և դուք անդի պատշաճ համարիք, անդ զիս մխիթարել խնամք տարջիք, այն զի այսու կեցութեամբ ողորմելի համարիմ զիս քան զամենայն մարդիկ, իբր թէ՝ յորժամ ոք զիւր տարբեալ գործոյն զօգուտն և զվնասն ոչ իմանայցէ, և ընդ այնմ ոչ զգաստացի միւանգամ չառնել զայնպիսիս, զի՞ պիտոյ է աշխատիլ, զի ամենայն գործք ինքնին իսկ ի վնաս են համարեցեալ անխնամ և անխոնջ կառավարութեամբ ինչ և իցէ մարդկան աշխարհի են։ Սակայն չընկալայ ամենևին բըլիշումն ինչ յայնց մատանց․ վասնորոյ սակաւ սակաւ աղերսելով խնդրեմ վերստին ի քէն ողորմած Տէր իմ, մի անտես առնէք, զձայն իմ դուք էք աւանդ զի յետ Աստուծոյ չունիմ երբէք այն յայլ ուստեք, միայն ի շնորհս ձեր ապաստան լինիմ, որպէս և եղեալ եմ․ քանզի ոչ սակաւ վայելեալ ի ձէնջ հայրական բարերարութեան զշնորհս, եթէ բանիւ, եթէ գործով և եթէ յլի արգեամբք զորս յիրաւի յիրաւի բեւեռեալ ունելով միշտ ի յոգւոջ իմում, մատուցանեմ հանապազ զաղօթս և զհայցուածս իմ առ ամենահզօր Թագաւորն Քրիստոս, վասն որ քան զոր պայծառապէս երկարաձգութեան պիտանաւոր անգին կենացդ պատուականի, և վասն ամենայն բարեպէս կառավարութեանցդ յաջողութեան առ ի նմանէ, և վասն օն անդր առաւելութեամբ յառաջադիմութեանցդ ընդ հոգւոյ և ընդ մարմնոյ, ի փառս և ի պարծանս իմս պարտաւորիս ի բոլորեալ կեանս իմ։

Այլ արդ՝ զի՞նչ այլ ձանձրոյթ թախանձանաց սրբոյ գլխոյդ պատուականի, ո՞վ նազելի Տէր իմ բարերար, զի Աստուծով և Աստուծով մեծ ունիք առնել այցելութիւն սրբոյ Տաճարիս, որ գեղօրէն տրտմութեամբ աչօք արդիւնակաց օգնականութեան ակնարկեալ սպասէ, որպէս յառաջնումն փրկութիւն իւր անգին արեամբն Քրիստոսի, նոյնպէս ի վերջնումն արենախառն պատուական քրտամբք գեղեցիկ պատկերին նորուն․ փառք Աստուծոյ, հանգուցեալ սորին սուրբ կոյսն Մարիամ մեծացուցէ անձն իմ զՏէր երգեր նաև սա ընդ քեզ մեծացուցանելով զանուն միայն Աստուծոյ, ունին մեծացուցանել խորհրդարար և զանունս, ի քարոզ բարբառ յականջս ամենայն հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որոյ անուն շնորհացն և անհուն ողորմութեանց զձեզ յանձն առնեմ, և ես քոյդ հայրական և տիրական մեծ զօ

բարեգութ մարդասիրութեան յանձն եղեալ՝ ձեռամբ խաղաղական ճշմարիտ վերադարձութեամբ հոգւոյս՝ և մեծագոյն յարգութեամբ մարմնոյս, շնորհապարտ աղօթարար

Նուաստ Եպ. Ներսէս
Բարսեղ Արք. Եպիսկոպոսեան

ի 1822, ի 21 օգոստոսի
Ի Սուրբ Էջմիածին։

ԲԱՐՁՐ ԳԵՐԱԶԱՆՑ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԶՆ. ԱՐՔԵՊՍ.

*Ողորմած Հայր մեր.*

Զգրութիւն ձեր սրբութեան ի ձեռն վերադարձելոց ի սրբազանէն ընկալեալ յարգմամբ, ընթերցաք առաջի ժողովոյն, և ծանեաք զորս ի նմա ամենեքեան։ Զպատասխանի որոյ արժան էր թէպէտ ուղղել ցարդ առ ձերդ մեծութիւն, բայց յաղագս ինչ ինչ արգելառիթից անագանեցաւ ցայս վայր, զորս լուծցուք ի ներքոյ։

Յառաջ քան զայս քանի՛ քանիցս որչափ ինչ միանգամ պատահեալ է գրել առ նորին աստուածարեալ քահանայապետութիւն, ոչ երբէք առանց ժողովոյն, այլ հաւանութեամբ և ստորագրութեամբ իւրեանց, բայց ի ծագել խնդրոյ և հարցափնութեան միանգամ առաջի ձաֆար խանին առ ոմանս ի ճշմարտասէր խորհրդականաց մերոց ներկայ գտանելոց անդանօր, թէ ո՛յք ոմանք են որք գրեցին առ սրբազանն, և անօրէնութեամբ որոց եղեն, նոքա ամենքին որք կամօքն գրեցուցեալ էին և հաւանութեամբ ստորագրեալ, հրաժեշտ տուեալ անձանց, զրոյց և առաքողն Եփրեմ վարդապետն է, ասեն, մեք ո՛չինչ գիտեմք ոչ զգրելոյն, և ո՛չ զգրեցելոցն, այդ ամենայն արարողութիւն ընդ նմա լինին, որով աներեւութարար թէ որչափ վնասու վշտացայ ես, կրադիս է յայտ ի վերայ այսոցիկ անցմանց և ես թոյլատրութեամբ լռելի մինչև ինքեանք հոգ կալցեն անօրինել և ես գործակից գտայց ըստ մասին, բայց այսու ամենայնիւ իբրև տեսի թէ ո՛չ ումեք է հոգ կամ փոյթ ամենեքին, ես անձամբ անձին ժողով արարեալ ի սենեկի մերում բանս արկի ի նոսա, թէ Ներսէս սրբազանի թղթոյն պատասխանի գրելո՞ց էք թէ ոչ, կամ զօմարս զխնդրեալսն առ ի նմանէ յղելո՞ց էք, առ հասարակ ասացին այո՛՝ ասացի զիա՛րդ, ո՛չ գրէք որ յառաջ ապա, ասեն քա՛ւ ի մէնջ զրոյցն բա՛ց ի քէն, զինչ արժանն է անօրինեա՛ և հոգա. յայնժամ և ես պատասխանեալ առ նոսա՝ կրկնեցի զբանս իմ, եթէ ինձ առաջարկէք և զկատարումն ինե խնդրէք, զիա՛րդ ըստ ժամանակին ամենեքեան մեկուսացեալ՝ զիս միայն մատնէք ի ձեռս իշխանաւորին, յորոց ոմանց յայնժամ եթէ որչափ անպատուութեան բանս և զրպարտութիւնս ընկալայ, չէ՛ հնարաւոր ասել ինձ այժմ, իբր զի այնու առաջադրութեամբ ինքեանց նացեմ ես և զվասս խնդրեմ զոր քա՛ւ և մի՛ լիցի յինէն, այլ վասն որպէս և իցէ յակամայ կամս յանձն առի և ձեռնարկի եթէ եկեղեցական սպասուց, եթէ սրբազանի ատտ թողեալ վճռեցինաց, եթէ միաբանից անուանց, եթէ ամալայից, և եթէ անասնեղինաց տումարս պատրաստել ըստ կարի, բայց խորհրդածեալ՝ թէ կան այլ ես բազում հարկաւոր ծանուցանելիք առ սէրութիւն ձեր, զորս թէ մի առ մի ի գիր արձանացուցանէաք, ո՛չ ներէին մեզ երկամսեայ միջոցք ժամանակի, վասն որոյ խակ և խակ վերին ակնարկութեամբն խորհուրդ ծագեցաւ ի սրտի իմում, եթէ ես ինձէն գնալ և տալ բաւականութիւն յաղագս ամենայնի, բարւոք իմն լինի, և նախապէս ի խորհուրդ մտեալ ընդ խորհրդական եղբարցն, յայտարարութիւն արարի, եթէ եղբարք՝ ահա ամբարքն լի՛ են ցորենով ողորմութեամբն Աստուծոյ, և ամալայից անկուղան ես վճարեալ եմ կիսով չափ գրամով և կիսով չափ ցորենով, արդ զամենայն հարկաւորացն ո՛չ է հնար գրով յաղուրդ տալ նորին սրբազնութեան, ընտրելի գտանեմ ես ինքնին գնալ և խօսակցել բերան առ բերան, զինչ կամիք. նոքա հաւանութեամբ խորհուրդ եղեալ և կամեցան բոլորեալ յօժարութեամբ։ Ի վերայ այն հաւանութեան եկեալ գնացաք և ի տեսութիւն սարտարին, ի նորաշէն գիւղն իւր ի Սարտարապատ անուանեալ անդին, ուր յետ բազում տեսութեանց և խօսակցութեանց ծանուցաք ես, թէ Ներսէս սրբազան Արհին վասն պարտուցն յանձն

տանալ է հոգալ, և տատել նշան տալի է, զի խնդրեալ է ի մէնջ ամենայն եղամտից հաշուոյն ցայս վայր, ես և տոմար անուանց միաբանից, ամսոյայից, և անտանեղինայ որպէս վայել է սանուտեառն, առ որ և ինքն յոյժ ուրախացեալ վկայեաց՝ եթէ արդարև յանձն առեալ է նա, այժմ այցելութիւն գտանի օձայն այլովքն հանդերձ. առաքեցաք նաև, եթէ զիս ես խնդրեալ է խրնդրեղեացն իւրոյ համարատու, վասն զի եթէ հրաման շնորհեսցես բարւոք լինի, քանզի թո՛ղ զհաշուատրութիւն, յուսամ՝ թէ և ըզմիաբանից հանդերձն հողացայց, կարելի ես է, թէ ի վերադառնալն իմ սակաւ ինչ զըրամ ես շնորհեսցէ ի պէտս ծախուց մերոց կամ ի թեթեւացումն պարտաւորութեանցն: Ընկալաւ զայս խնդիր մեր զուարձութեամբ, համանգամայն և բիլէթ եհան առ օրինս, զի զկնի երից աւուրց եղանելոց էի բարեխնամայիւ ի վայելս սրբազանին և ձեր իսկ Հայրութեանն, և իբրու որպէս յայտնի է Աստուծոյ, ոչ այլ ինչ էին զխաւումն մեր, այլ եթէ ինքնին ցուցանել զարդիւնս ունայն կառավարութեան իմոյ և տալ զհաշիւ դաւթարիս, և որ առաւելն է, զգալի աչօք արժանի լինել սրբոյ տեսոյդ ընդ բազմամեայ սրտատոչոր բաղձանացս, և վերջապէս վասն կառավարութեան սրբոյ Աթոռոյս ընդ չափու բաւականութիւն ընկալեալ, դարձս առնել վերստին, որ հազիւ երրեք ձգէին միամսեայ ժամանակօք սոյն գործողութեանցս. այլ Դեղամով Սանկփանանոս եպիսկոպոս բարերար եղբայրն մեր որ յառաջագոյն յօդուտ սրբոյ Աթոռոյս համարեցաւ և կնքեաց հաւանութեամբ, սկսաւ յետոյ վրդովել և վրդովեցուցանել զամենեսեան առ հասարակ յարուցանելով ի վերայ մեր զհոգեորականս և զաշխարհականս. հաչակ հարեալ յներեան առ օտարազգի պարսաանարսն թէ, ո՛ւմ կայք ո՛ր յուսով դադարիք, առաւել մինչ ցարդ եթէ խալիֆայիւն չունէաք անկախութիւն հաստատանելոյ ձեզ զպարտս ձեր, սա էր յոյս մեր յորմէ կարող էիք բաւականութիւն ընկալնուլ, զի սա զօլով ի մէջ մեր միաբանութեանց հարուստն և փարայլին, խարէութեամբ և հնարիւք՝ կամի փախուստ առնուլ յերեաց ձերոց, և նորա որք ի սկզբանն չէին հաւանօրէնութեան եկեալ խոնեցան ի սուրբ Աթոռս ի խնդիր զրամոց իւրեանց. այլ իբրև. արժանապէս ուշադրութեամբ իրազգած զըտանն մեզ, առնն, այլ ազգ զգացուցին, ապաքէն որ վասն շահաէտութեան օձագիս և մեր անօրինես զայսոսիկ, Աստուած բարի ձեռնտուհաս տացէ, մեք ես պարտաւորիմք ի բաւական ձեռնապարհորդութիւնս առաջնորդել քեզ, այլ խռովարարն այն ամենեքին անհանգարտ ի չարագոյն բնաւորութիւնս իւր, զընացեալ նստաւ յՕշական՝ մեռեալ խղճիւ քարոզ կարդալով առ շրջակայսն աստ և անդ ի քարս և ի փայտս և յամենայն տեղիս, եթէ Եփրեմ վարդապետն հանդերձեալ է փախչել, զգո՛յշ լերուք անձանց կամ արգելուլ և կամ ըմբռնել, ապա թէ ոչ՝ ի ձեռաց ճանփար խանին ո՛չ ազրիք յաւիտեան, մինչ զի տարածեցին զայս լուր ես յանկարծ Սարաարին, յորմէ եկն առ ի վերայ մեր հրաման վերստին, եթէ իբրու մեք կամեցաք և պատշաճ համարեցաք զառաջինն գնալ ձեզ առ սրբազանն, բայց ունիմ ինչ ինչ հարկաւոր ծանուցանելիս քեզ, լաւ է զձեռնապարհորդութիւնդ, մինչև վերադարձայց ի Պայազիտու: Այժմ մոռացեալ զամենայն հոգամ վասն կատարածեալ հրամանին, եթէ զի՛նչ կատարածն իցէ արդեօք, արդարև տագնապ զիս ունի, մինչև եղիցի, որով այնչափ շուարեցայ մինչև մոռանալ ինձ և զառաջին անօրինեալ տոմարսն և աստ յամենայն կառավարութենէ ձեռն ամփոփեալ հրաժարեալ նստիմ ի խրճիթ իմ, մինչև գտից զայցելութիւն ամենաբաւականին, ուստի անօրինեմ վասն սրբոյ տանս զխարդ և զխակէ և ում կամիք յանձն առջիք յայսմհետէ, քանզի լցաւ ցարդ չափ համբերութեան իմոյ և յամենայն ժամանակս բաւականապէս վշտացայ ի նմանէ. երկրաչափ եղին բարձրացան յանդգնութիւնք նորա, և անտանելի հայհոյութեամբքն ո՛չ հանդարտի երկիր առ հոգևորականս և առ աշխարհականս, մինչ զի հայհոյեալքն եթէ անձնապան ո՛չ կարծէին զօլ զանձնէ, բաղում անգամ ջրահեղձոյք և այլով կերպիւ լաւ ընրէն մեռանել, քան թէ լսել զօդեղայից բարբառ զժոխատիպ անդուսն բերանոյ անամօ-

թութեան նորա, առ այս յաւելից եւս, և վըկայեսցէ յաստուածակոյս կողմանէ, ականատես հաւատոյ փորձառու պատմիչ տեղապահ սրբազան Հայրն, զի յանցեալ ամարան ինչ ոչ մնաց, զոր ո՛չ հասոյց որով կերպիւ և իցէ ի գլուխ խղճալի ծերունւոյս, նոյնպէս և ամեհի զժնեայ կենցաղավարութեամբն: Զի հոգելոյս լուսաւոր Գրիգոր եպիսկոպոսին հանապազօր ո՛չ դադարէր ի բամբասելոյ և ի նախատելոյ վասն բազմաժողով հանգիսից նորա, այժմ ինքն զերազանցեալ ամենայնիւ քան զնա և քան զամենեսեան, որք ո՛չ առնեն և արարին երբէք, քան զոր սա յանդգնեալ առնէ միայն. զի ունի առեալ զԶաքարեան Գրիգորն, զերկուս սարկաւագունս, երկուս դպիրս, զԹունի Թումբչին, զերկուս եղբարսն խոհարարի, Թողում ասել զդերձակի աշակերտս և զայլ ծանօթ անպատկառի մըշտակեաց հացակերսն, որք զցայգ և զցերեկ սեփականեալքն են խցին: Ուստի թէ կարող էք կերպիւ ինչ սանձել և յուղղութիւն ածել, այն է զի բարի լինիցի մեզ և ամենեցուն, ապա թէ ոչ բարւոք համարիմ եթէ համանգամայն ծայրագոյն իշխանութիւն ինքեան յանձնեսցես, թերեւս փոքր ինչ հանդարտեսցին խղճալի միաբանութիւն և խղճալի լսելիք նոցա ազատեսցին յանուանելի հայհոյութեանցն: Քանզի այսպէս էին ճշմարտութիւն, զոր գրեցաք անսուտ առաջի Աստուծոյ, որպէս ահա և տիրացու Աբրահամն ունի պատմել զորս ետես աչօք բացօք և ականջօք լուաւ, որ զրեթէ յուսահատութեամբն փութացաւ ի դարձ, յորմէ, եթէ երկբայեսջիք, գրեա՛ և տեղեկացի՛ր ի միաբանութենէց ստոյգ և առաւել քան զիս բողոք կարդասցեն ի հաւատարմութիւն, վասնորոյ աղաչեմ զգթութիւնդ, ապա կացո՛ զիս, բաւական տառապեցայ ամենայն կերպիւ, այլ ոչ եւս կարեմ հանդարտել, և որպէս հրաժարեալ եմ, նոյն եմ անփոփոխելի, և ոչ եղէց ձեռնամուխ, եթէ ո՛չ ընկալայց զրաւականութիւն ի ձեռն մեծութենէդ, որում ահա մնամ ակնդէտ ակնկալութեամբ:

Արդ՝ պատուական Հայր, զծանրութիւն աւուրն ես բանում, զսով և զցուրտ, ըզհաշիւ տեսանելն, անձամբ անձին զդուռն բանալն, ամենայն իրաց մանրամասն վերահասութիւն, յամենայն աչաց անկանելն, եթէ զպարկեշտութիւն ընկալայց, իրաւունք է, զի այսպիսի զաւն նախատանօք և արատաւորութեամբ ունայնացուսցէ զվաստակ իմ, մեռուցանելով զիս վատահամբաւութեամբ առաջի ամենայն ազգաց, արդարև մինչև ցարդ վաղ ուրեմն խաղաղ գլխովին ընդ հողոյ հաւատարեալ էի, եթէ յայլ սինօթական եղբարցն բաւական արտադրութիւն չունենայի, որոց Աստուած բարի տացէ, անպատ են շնորհակալութիւն իմ զայնցանէ յաղագս ամենայնի մխիթարութեան նոցա: Ո՛ղջ լեր և մնամ զամենայն կեանս իմ ի սրտէ աղօթող վասն կենացդ պայծառութեան անձնանուէր հպատակութեամբ:

Ներսէս Նուաստ Եպս.
Բարսեղ Արք Եպիսկոպոսեան

1822 ի 1 նոյեմ.
Ի Ս. Էջմիածին:

## ՏԱՃԿԱՀԱՅՔ·

—Երուսաղէմի Յունաց Պատրիարքը երկու եպիսկոպոսներու և մէկ քանի վարդապետներու հետ Ծննդեան երրորդ օրը շնորհաւորական այցելութեան գացեր է Տ. Յարութիւն Ս. Պատրիարքին: Նոյն տօնին առթիւ շնորհաւորական այցելութիւն տուեր են նաև Ասորիներու և Ղպտիներու եպիսկոպոսները:

—Կաղանդը հանդիսաւորապէս տօնուեցաւ Սանասարեան վարժարանին մէջ դեկտ. 31-ի գիշերը:

Ներկայ էին, վարժարանին գիշերօթիկ և ցերեկեայ բոլոր աշակերտներէն ի զատ, տեղւոյս առաջն. Տեղապահ և Սանասարեանի Հոգաբարձութեան Նախագահ Գեր. Տ. Զաւէն Ծ. վարդապետ, ի դիմաց Հոգաբարձութեան՝ գանձապետ Կարապետ էֆէնտի Տ. Աղաբեան, տեսչական և ուսուցչական մարմինները: Հանդէսը ըսկըսաւ Համիտիէ քայլերգով, որուն ունկնդրեցին ներկայք յոտնկայս:

—Ս. Ծննդեան Խթման առթիւ, երեկուան ժամերգութենէն յետոյ, տնօրհնէքի սովորական հանդէսը կատարուեցաւ Սանասարեան վարժարանի մէջ, հանդիսադրութեամբ Գեր. Տ. Զաւէն